«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ») 20.01.2026 ԹՎԱԿԱՆԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ «ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎ») ԹԻՎ 01/2026 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(արձանագրությունը կազմված է«23» հունվարի 2026 թ.-ին ՀՀ, ք. Երևանում և բաղկացած է 4 (չորս) թերթից (առանց հավելվածների))

Ք. Երևան
23.01.2026թ.

Արտահերթ ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը.	20.01.2026 թ., ժամը 11:00-ին (Երևանի ժամանակով)
Արտահերթ ժողովի անցկացման կարգը.	Ընկերության բաժնետերերի համատեղ ներկայությամբ՝ քվեաթերթիկների միջոցով
Արտահերթ ժողովի գումարման վայրը.	ՀՀ, քաղաք Երևան, Չարենցի փողոց 1, դահլիճ
Արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.	13.01.2026թ.

«Հայնախագիծ» ԲԲԸ (գրանցման համարը՝ 273.130.03674, ՀՎՀՀ՝ 01503291) Արտահերթ ժողովը գումարվել է Ընկերության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 26.12.2025 թ. որոշմամբ (արձանագրություն № 26/12/2025, 29.12.2025 թ.) և 19.12.2025թ. որոշմամբ (արձանագրություն № 12/2025, 22.12.2025թ.):

Արտահերթ ժողովին մասնակցում էին Ընկերության տեղաբաշխված քվեարկող 7,548 հատ բաժնետոմսերից (կանոնադրական կապիտալի 100%) ձայնի իրավունք տվող 4910 հատ բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերը և/կամ վերջիններիս լիազոր ներկայացուցիչները, հետևաբար ժողովի քվորումն առկա է [1](Արտահերթ

[1] Ընկերության Արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի (և/կամ վերջիններիս ներկայացուցիչների) գրանցումը և գրանցման ավարտի պահին քվորումի

ժողովին ներկա բաժնետերերը և/կամ վերջիններիս լիազոր ներկայացուցիչները տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 65 տոկոսին):

Արտահերթ ժողովին ներկա էին (առանց քվեարկելու իրավունքի) նաև՝ Ընկերության գործադիր մարմնի կողմից լիազորված անձինք՝ Արամ Օրբելյանը, Նարինե Բեգլարյանը և Անի Մկրտումյանը, ինչպես նաև Ընկերության աուդիտ իրականացնող ընկերության՝ «Թրաստ Աուդիտ» ՓԲԸ տնօրեն Հայկ Մարգարյանը, Ընկերության հաշվիչ հանձնաժողովի բոլոր չորս անդամները՝ Գրիգոր Պետրոսյանը (նախագահ), Միքայել Մարտիրոսյանը, Առնո Օհանյանը, Ռոբերտ Այվազյանը:

Արտահերթ ժողովը նախագահում էր Ընկերության Խորհրդի նախագահ Միհր Չերքեզյանը, իսկ քարտուղարում էր Ընկերության կորպորատիվ քարտուղար Հայկուհի Ռուբինյանը:

Օրակարգը

1. Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում:
2. Ընկերության խորհրդի տասը անդամների ընտրություն:

Արտահերթ ժողովին բացման խոսքով հանդես եկավ Ընկերության Խորհրդի նախագահ Մ. Չերքեզյանը՝ ներկայացնելով Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսին տիրապետող բաժնետերերի կողմից 08.12.2025 թվականին ներկայացված պահանջի բովանդակությունը և այդ պահանջի հիման վրա հրավիրված Արտահերթ ժողովի օրակարգում ներառված հարցերը: Վերջինս նաև ամփոփեց Ընկերության՝ 2025 թվականի հունիսին կայացած բաժնետերերի տարեկան ժողովի ընթացքում Ընկերության տնօրենի կողմից ներկայացված Ընկերության զարգացման ուղղությունները՝ ակտիվների վաճառքի հնարավորությունը և այդ առնչությամբ Ընկերությունում կատարված աշխատանքները: Միաժամանակ Մ. Չերքեզյանը հայտնեց, որ ստացվել են ահազանգեր Ընկերության բաժնետերերի կողմից առ այն, որ 2026 թվականի հունվարի 11-ին Ընկերության բաժնետերերի անձնական հեռախոսահամարներին ստացվել են անանուն և անստորագիր նյութեր և տեղեկություններ Մարինե Իսահակյանից Արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ, ինչի վերաբերյալ Ընկերության կողմից իր պաշտոնական կայքում 13.01.2026

առկայության վերաբերյալ հաշվարկը իրականացվել է Ընկերության հաշվի հանձնաժողովի կողմից:

թվականին հրապարակվել է հայտարարություն Ընկերության բաժնետերերի անձնական տվյալների ապօրինի օգտագործման վերաբերյալ: Տվյալ հայտարարությամբ մասնավորապես նշվել է, որ Ընկերությանը հայտնի չէ այդ տեղեկությունների ու նյութերի աղբյուրը կամ ծագումը, հիմնավորվածությունը և այլն, ավելին Ընկերությունում նախաձեռնվել է ծառայողական քննություն պարզելու թե ինչպե՞ս և ու՞մ միջոցով է Մարինա Իսահակյանը ստացել բաժնետերերի անձնական տվյալները և օգտագործել դրանք Ընկերության բաժնետերերի հետ կապ հաստատելու համար՝ չունենալով բաժնետերերի համաձայնության:

Մ. Չերքեզյանի ելույթին հաջորդեցին Ընկերության բաժնետերերի հարցերը ժողովի վարման կարգի վերաբերյալ, մասնավորապես արդյո՞ք նախատեսվում է Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ քննարկում և Արտահերթ ժողովին Ընկերության բաժնետերերից բացի այլ անձանց մասնակցության (վերջիններիս մասնակցության վերաբերյալ խորհրդի կամ առնվազն 25 տոկոս բաժնետոմսերին տիրապետող բաժնետերերի որոշման առկայության), ինչպես նաև Արտահերթ ժողովի արձանագրման վերաբերյալ: Նշված հարցերին ի պատասխան պարոն Չերքեզյանը նախ նշեց, որ Արտահերթ ժողովը չի ձայնագրվում, սակայն արձանագրվում է, ապա հավելեց, որ Օրակարգի հարցերի վերաբերյալ քննարկում չի նախատեսվում, քանի որ այն չի բխում ձևակերպված Օրակարգից, այն է՝ Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում և Ընկերության խորհրդի տասը անդամների ընտրություն, ոչ թե խորհրդի անդամների գործունեության քննարկում, ներկայացված չէ խորհրդի գործունեության վերաբերյալ հաշվետվություն և այլն: Ի հավելումն Մ. Չերքեզյանը նշեց, որ ներկա են Ընկերության խորհրդատուները, որոնք իրավասու են ներկա գտնվելու Արտահերթ Ժողովին լիազորագրի հիման վրա, իսկ վերջիններիս մասնակցության վերաբերյալ հարցը չի վերաբերում Արտահերթ ժողովի վարման կարգին:

Այնուհետև, ներկայացվեց քվեարկության կարգը, քվեարկությունը հայտարարվեց սկսված՝ սահմանելով, որ Օրակարգի 1-ին և 2-րդ հարցերը քվեարկության են դրվում առանձին (2-րդ հարցը հիմք ընդունելով 1-ին հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները), յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության համար տրամադրվում է 30 րոպե ժամանակ: 1-ին հարցին կողմ քվեարկելու դեպքում սկսվում է 2-րդ հարցի քվեարկությունը, որը տևողությունը սահմանվում է 40 րոպե:

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցը դրվեց քվեարկության և համաձայն Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կողմից կազմված և հաշվիչ հանձնաժողովի նախագահի կողմից Արտահերթ ժողովում հայտարարված քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության (այսուհետ՝ «Հաշվիչ հանձնաժողովի արձանագրություն», կցվում է սույն արձանագրությանը որպես հավելված 1) Արտահերթ ժողովը՝ Արտահերթ ժողովին ներկա բաժնետերերի ձայների մեծամասնությամբ որոշեց դեմ քվեարկել Օրակարգի 1-ին հարցին և վաղաժամկետ չդադարեցնել Ընկերության խորհրդի բոլոր անդամների լիազորությունները ըստ ձայների հետևյալ համամասնության.

Դեմ	**3635**
Կողմ	**1154**
Ձեռնպահ	**7**

Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության համաձայն քվեատուփում առկա ընդհանուր քվեարթերթիկների քանակը կազմում է 134՝ 4900 ձայնով, իսկ անվավեր քվեաթերթիկների քանակը կազմում է 2՝ 104 ձայնով:

Արտահերթ ժողովի օրակարգի 2-րդ հարցը չդրվեց քվեարկության՝ հաշվի առնելով Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ քվեարկության արդյունքները:

Սույն արձանագրությունը կազմված է 2 օրինակից, ՀՀ, քաղաք Երևանում և բաղկացած է «4» թերթից (առանց հավելվածների): Արտահերթ ժողովում քվեարկության ժամանակ օգտագործված քվեաթերթիկները զմռսվել են Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կողմից և հանձնվել Ընկերության արխիվ՝ պահպանության համար:

Մ. Չերքեզյան

Հ. Ռուբինյան